

Տ Ա Թ Ե Վ Գ Ի Տ Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ի Ր

«Մանկավարժական միտք» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ. նիստի որոշման (արձ. № 25)՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար

ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ՄԻՏՔ

ПЕДАГОГИЧЕСКАЯ МЫСЛЬ
PEDAGOGICAL THOUGHT

2018

1 – 2 (68–69)

ՀԱՆԴԵՍԻ ՀԻՄՆԱԴԻՐՆ Է
«ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ»

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈԿՐԱՏ	«Տաթև ԳԿՀ»-ի գլխավոր տնօրեն, համարի պատասխանատու խմբագիր
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ԶՈՒԼԻԵՏԱ	ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
ՂՈՒԿԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ	ՀՀ կրթության ազգային ինստիտուտի տնօրեն Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼԵՄՍ	Մանկավարժական գիտությունների դոկտոր Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ	Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱԶԱՐՅԱՆ ՌՈՐԵՐՏ	Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ	Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի ղեկան, բան. գիտ. թեկնածու
ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻԳՈՐ	Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տնօրեն Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՄԱՐԴՈՅԱՆ ՌՈՒԶԱՆԱ	Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի ղեկան, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ
ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԴԱ	Երևանի պետական բժշկական համալսարանի քիմիայի ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՐԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆ ԷԴԱՐԴ	«Քվանտ» վարժարանի տնօրեն Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ դասախոս

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

«ՀՐՈՎԱՐՏԱԿ-ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սույն թեման ներառում է մասնավորապես 7-12-րդ դարերում Հայաստանի բնակչությանը արաբ նվաճողների կողմից տրված հրովարտակ-պայմանագրերի, ինչպես նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում պահվող իսլամի մարգարե Մուհամմադի (610-632) և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի (656-661) անուններով ձեռագրերի ուսումնասիրությունը:

Թեմայի դասավանդման նպատակն է նախ և առաջ հնարավորություն տալ ուսանողներին ծանոթանալու պատմական այն համատեքստին, որում ձևավորվել և զարգացել են հայ-արաբական հարաբերությունները, հետևել դրանց պատմական զարգացման ընթացքին ժամանակի լայն կտրվածքով:

Վերոհիշյալ հրովարտակ պայմանագրերով դարեր շարունակ կարգավորվել են մուսուլման նվաճողների փոխհարաբերություններ այլակրոն բնակչության հետ, որոնց մասին հիշատակում է հայկական և մուսուլմանական պատմագրությունը¹: Այս առումով վերոհիշյալ հոդվածի հիմնական խնդիրն է նաև մեր կողմից դիտարկվող թեմայի դասավանդման մեթոդների ուսումնասիրությունը, որի առնչությամբ դրվել են մի շարք խնդիրներ. ա) ուսանողների մեջ ձևավորել մասնագիտական հմտություններ՝ վերլուծելու 7-12-րդ դարերին վերաբերող փաստական նյութերը, այդ շրջանում կազմված հրովարտակ-պայմանագրերի բովանդակությունը՝ դիտարկելով դրանք քաղաքական տարբեր համատեքստերում, բ) սահմանել հրովարտակ պայմանագիր հասկացությունը, գ) նորովի գնահատել և արժևորել նրանց

դերը միջնադարում, դ) վեր հանել հրովարտակ-պայմանագրերի արդիականությունը մերօրյա կյանքում, երբ միջպետական հարաբերություններ են հաստատվել Հայաստանի և արաբական երկրների միջև ու կենսական անհրաժեշտություն է դարձել հայ-արաբական հարաբերությունների հիմքում ընկած հրովարտակ-պայմանագրերի արդիականության վերհանումը, ե) անցկացնել այս թեմայով քննարկումներ: Թեմայի դասավանդման ընթացքում ուսանողը կըմբռնի հրովարտակ-պայմանագրերի համատեքստում մշակութային և պատմական երկխոսության կարևորությունը երկու երկրների հարաբերությունների մեջ: Թեմայի յուրահատկությունն այն է, որ հրովարտակ-պայմանագրերի միջոցով ցույց է տրվում արաբական առաջին արշավանքների ընթացքում նվաճողների հանդուրժողականությունը այլակրոն բնակչության նկատմամբ, որի ցայտուն օրինակներն են Մատենադարանում պահվող Մուհամմադ մարգարեի անունով դաշնագրերը:

Եվ այժմ, երբ իսլամիստները սպառնում են համաշխարհային հանրությանը քաղաքակրթական մշակույթի հուշարձանների ավերմամբ և քրիստոնյա բնակչության հանդեպ ունեցած դաժան գործելակերպով, էլ ավելի է կարևորվում վերոհիշյալ հրովարտակ-պայմանագրերի դերը: Այն ցույց է տալիս, որ իսլամի ճատագովները ինչքան են հեռացել իսլամի կրոնական սկզբունքներից:

Թեմայի դասավանդման մեթոդաբանական հիմքերը սերտորեն կապված են նյութի աղբյուրագիտական վերլուծությունների և պատմահամեմատական մեթոդի կիրառման հետ: Հրովարտակ-պայմանագրերի վերլուծության ընթացքում մեծ տեղ է հատ-

1 Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ՝ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 164, Al-Balazuri, Futuhal-buldan, Bairut, 1983, p.132, 139:

կացվում մուսուլմանական միջնադարյան աղբյուրների թարգմանությանը՝ զուգակցելով այն հայկական աղբյուրների, ինչպես նաև արաբերեն բնագրերից կատարված հայերեն թարգմանությունների հետ¹:

Թեմայի դասավանդման ու ուսումնասիրության մեթոդներն են դասախոսությունները, բանավեճ-քննարկումները, լսարանային քննարկում-սեմինարները և հետքննական վերլուծությունը:

Սույն թեմայով կարևորվել են հետևյալ կետերը. Հայաստանում տիրող քաղաքական կացությունը 7-րդ դարում, երբ 652 թ. Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին (639-654) պայմանագիր կնքեց Ասորիքի կուսակալ Մուավիայի (639-661) հետ: Այդ պայմանագրով Հայաստանը երեք տարով ազատվում էր Արաբական խալիֆայությանը հարկեր վճարելուց, որոնց չափերն էլ հետագայում պետք է որոշեին հայերը: Հայաստանը կարող էր ունենալ 15-հազարանոց հեծելազոր, հայ նախարարները թեև համարվելու էին խալիֆայության հպատակները, սակայն պահպանելու էին իրենց ինքնուրույնությունը, հողատիրական-ժառանգական իրավունքները, նրանց հետ միասին հոգևոր դասն էլ ազատվում էր հարկեր վճարելուց²: Դասավանդման ընթացքում շեշտվում է, որ այս պայմանագրում արտահայտված էր նաև հայերի նկատմամբ խալիֆայության մեղմ և զիջողական վերաբերմունքը, քանի որ արաբա-բյուզանդական մրցակցության պայմաններում Հայաստանն իր դիրքով երկու կողմերի համար որոշակի կարևորություն ուներ: Այս պայմանագիրը մեծ նշանակություն ունեցավ միջնադարյան հայ-արաբական հարաբերությունների զարգացման և նրա ընթացքի վրա, քանի որ հետագայում՝ Օմայյան խալիֆայության օրոք, ընդհուպ մինչև Աբբասյան խալիֆայության շրջանը (750-1258 թթ.), հիմնականում պահպանվեցին և իրագործվեցին այդ պայմանագրի պայմանները, որից հետո Աբբասյան

չայ-արաբական հարաբերությունների համատեքստում անդրադարձ է կատարվում նաև Մուհամմադ մարգարեի կողմից «Գրքի ժողովրդի»³ նկատմամբ ունեցած վերաբերմունքին, որի լավագույն աղբյուրը Ղուրանն է⁴: Շեշտվում է, որ Մուհամմադ մարգարեի՝ այլակրոն բնակչության նկատմամբ ունեցած հովանավորության ու պաշտպանության մասին դրույթը գործարկվել է Արաբական թերակղզու հրեա, Եմենի Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչության նկատմամբ, որով վերջիններս պարտավորվում էին վճարել գլխահարկ մուսուլմանական համայնքին՝ ի նշան հպատակության⁵:

Այս առումով կարևորվում է նաև 654 թ. Դվինի (Դաբի) բնակչությանը Հաբիբ իբն Մասլամա զորավարի կողմից տրված պայմանագիրը, որով երաշխավորվում էին քաղաքի բնակիչների անվեճեցման գոյությունը և նրանց գույքի ապահովությունը⁶: Թեմայի շրջանակներում ներկայացվում են նաև արաբական արշավանքները դեպի Հայաստանի հարակից երկրներ (Վիրք, Ալվանք), որոնց բնակիչներին արաբ զորավարների կողմից տրված պայմանագրերը⁷ մեծ կարևորություն ունեն վերոհիշյալ հրովարտակ-պայմանագրերի ուսումնասիրության համար:

Թեմայի մեջ առանցքային տեղ է հատկացվում Երուսաղեմի հայկական համայնքին Մուհամմադ մարգարեի շնորհած պայմանագրին, որը հիշատակում են Երուսաղեմի պատմության հայ գիտակները⁸: Վերջիններս քաղաքի հայ համայնքի պատմությունը շարադրել են՝ հենվելով տեղի հայկական վանքերում պահվող հնագույն ձեռագրերի, փաստաթղթերի վրա: Ըստ այդ տեղեկու-

3 Գրքի ժողովուրդ – մարդկանց խումբ, որը միջանկյալ տեղ էր զբաղեցնում ըստ կրոնի, Ալլահին հավատացողների՝ մուսուլմանների և անհավատների միջև, Ислам. Энциклопедический словарь, Москва, 1991, ст. 28.

4 Коран. Переводы комментариев И. Ю. Крачковского, Москва, 1986: Տե՛ս նաև Կոզմյան Ա., Ղուրանը հայոց մեջ, Եր., 2003.

5 Al-Balazuri, Kitab al-Futuh, p.71.

6 Chazaryan M., Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1905, s. 21.

7 Բելածորի, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 45-46.

8 Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հատոր 1, Երուսաղէմ, 1931, էջ 261.

1 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, արաբական աղբյուրներ, Գ. Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյանը, Եր., 1965, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանը, Վիեննա, 1919:

2 Պատմութիւն Ալեքոսի, էջ 164:

թյունների՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Աբրահամը, տեսնելով իսլամական կրոնի հաջողությունները, քրիստոնյաներից կազմված պատվիրակության հետ ժամանում է Մադինա՝ ցանկանալով Մուհամմադից ստանալ հայկական համայնքի անվտանգությունը ապահովող փաստաթուղթը¹:

Այդ պայմանագիրը հետագայում հաստատվեց Ալի իբն Աբու Տալիբ, Օմար իբն ալ-Իսատտար (634–644) խալիֆաների, Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինի (1171–1193) և Եգիպտոսի սուլթանների կողմից:

Պայմանագրով հայերին էին անցնում Երուսաղեմի մի շարք վանքեր, հայ համայնքը պարտավորվում էր արաբ նվաճողներին պաշտպանության ու հովանավորության դիմաց վճարել գլխահարկ: Նշվում է, որ Մուհամմադ մարգարեի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տված պայմանագիրը մուսուլմանա-հայկական շփումների ամենավաղ ապացույցն է և մատնանշում է հայերի՝ մուսուլմանների հետ փոխհամաձայնության գալու առաջին փուլը²: Այս իմաստով հետագայում՝ արաբական նվաճումների ընթացքում, հայերի տրված բոլոր պայմանագրերը կարելի է համարել Մուհամմադ մարգարեի Երուսաղեմի հայերին տված պայմանագրի վերահաստատումներ:

«Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր» թեմայում առանձնահատուկ տեղ են գրավում նաև միջնադարյան հայ պատմագրության վկայությունները, որ Մուհամմադը (իսլամի մարգարեն) «...գլուխ վաճառական ացն՝ եգիպտացի, հաստատեալ էր աղանդովն Արիոսի ու Կերինոթոսի արգել զսուրն եւ բանիւ խրատու նորա հնազանդեցուցան զմեծ մասն տիեզերաց»³: Նա մուրհակ է տալիս Հայոց աշխարհին՝ համարձակորեն դավանելու քրիստոնեությունը գլխահարկ վճարելու պայմանով: Այս պայմանագրի կետերը մանրամասն հետազոտության են ենթարկվել հայ պատմաբանների կողմից: Ըստ նրանց՝ վերոհիշյալ պայմանագիրը հայերին է տրվել Մուհամ-

մադ իբն Մրվան (693–709) զորավարի կողմից⁴, ով 701 թ. արշավեց դեպի Հայաստան: Այս պայմանագիրը հայ պատմագիրները անվանել են «Մեծ Մանշուր» (հրովարտակ)⁵ տարբերելու համար «Փոքր Մանշուրից», որը հայերին է տրվել դարձյալ Մուհամմադ իբն Մրվանի կողմից: Այս պայմանագրի տեսքը չի պահպանվել, սակայն ունեցել է կրոնական բնույթ, որի մասին հիշատակում են հայ պատմագիրները⁶: Թեմայի մեջ անդրադարձ է կատարվում 8-րդ դարի սկզբի այն պատմական իրադարձություններին, որոնց արդյունքում 703 թ.՝ Վարդանակերտի ճակատամարտից հետո, Սահակ Ձորափորեցի (677–703) կաթողիկոսի ջանքերով հայերին է տրվել այդ պատմագիրը:

Հրովարտակ-պայմանագրերի բովանդակության կառույցի ուսումնասիրության համար կարևորվում են նաև արաբական նվաճումների ընթացքում արաբ զորահրամանատարների կողմից Սիրիայի, Վերին Միջագետքի, Պաղեստինի, Սասանյան Պարսկաստանի բնակչությանը տրված պայմանագրերի⁷ պայմանների դիտարկումը և համեմատությունը հայերին տրված դաշնագրերի հետ, նրանց միջև եղած նմանությունների և տարբերությունների վերհանումը: Այս առումով շրջափվում են նաև այդ պայմանագրերում առկա հարկերի չափերի ամսանրամասները, որոնք շատ կարևոր են արաբական տիրապետության վաղ շրջանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հետազոտության համար:

Վերոհիշյալ թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահվող միջնադարյան արաբատառձեռագրական նյութը, առանձնացվել են հատկապես № 272, 357, 358 ձեռագրերը և թեմայի հետ կապված հայերեն թարգմանությունները, որոնք կրկնօրինակվել են 16–19-րդ դարերի միջակայքում և ունեն միջնադարին բնորոշ բառապաշար: Այս դաշնագրերը մեծ դեր են խաղացել ուշ դարերում մուսուլմա-

1 Նոյն տեղում:

2 Dadoyan S., *The Armenians in the Medievalislamic world*, vol 1, London, 2012, p. 52.

3 Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ներկայս, Վաղարշապատ, 1983, էջ 82:

4 Тер-Гевондян А., *Арменияи Арабский халифат*, Ереван, 1977, ст. 186.

5 Գրիգոր Տաթևացի, Ընդդէմ տաճկաց, Եր., 2009, էջ 53:

6 Պատմութիւն Ղեւոնդէայ մեծի Վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 3:

7 Al-Tabari, *Tarikh al-rusulwa al-muluqIII*, s. 2158/1, Ibn al-KufiFutuh al-buldani, 1968, Huderabad, s. 109–110.

նական տիրապետության տակ հայտնված հայության կյանքում՝ շատ դեպքերում դառնալով նրա անվտանգ կեցության գրավականը այդ երկրներում:

Մուհամմադ մարգարեի անունով № 358 ձեռագիրը երկկետու է՝ արաբերեն, տոհատակում՝ պարսկերեն, և շատ հաճախ մի շարք պատմական տերմինների անընթեռնելիության պատճառով անհրաժեշտություն է ծագում դիմել ձեռագիր՝ պարսկերեն, տարբերակին, իսկ միջնադարյան մի շարք պատմական տերմինների լուսաբանման համար կարևորվում են 13–14-րդ դարերի արաբ քերական իբն Մանզուրի բառարանը¹, իսլամագիտական այլ բառարաններ²: Այս առումով խնդիր է դրվում ծանոթացնել ուսանողներին արաբական միջնադարյան բառապաշարին: Պատմահամեմատական և աղբյուրագիտական վերլուծական մեթոդների կիրառմամբ ցույց է տրվում, որ վերոհիշյալ ձեռագրերի հիմքում դրված է քրիստոնեական ժամանակագրության մեջ հիշատակված Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագիրը³, որի կազմման ժամանակագրական շրջանակները ձգվում են 7–րդ դարի կեսից մինչև 9–րդ դարի առաջին կեսը: Այն համընկնում է վերոհիշյալ ձեռագրերի հետ իր բառապաշարով, բառային ձևակերպումներով, քրիստոնեամետ ուղղվածությամբ և այլն:

Այի իբն Աբու Տալիբ խալիֆայի անունով № 357 պարսկերեն ձեռագրի թարգմանությունը, որը գրված է մանր տառերով, կատարվել է Լ. Մինասյանի գրքում զետեղված պարսկերեն տարբերակի⁴ և նույն ձեռագրի հայերեն թարգմանված այլ օրինակների համադրությամբ՝ քննադատական մոտեցում ցույց տալով որոշ պատմական տերմինների ճշգրիտ հայերեն թարգմանությանը: Ուսանողների առաջ խնդիր է դրվում ծանոթանալ ձեռագրերի ու միջնադարյան պատմական բառապաշարին, այն համեմատության մեջ դնել Նաջրանի պայմանագրի և մուսուլ-

ման պատմագիրների կողմից հիշատակված համապատասխան պայմանագրերի հետ և կատարել վաղ ու ուշ շրջանի արաբական պատմական բառապաշարային շերտերի ուսումնասիրություն, որ շատ դեպքերում կօգնի ցույց տալու, թե որ պատմական տերմինն է փոխարինվել մյուսով կոնկրետ դարերում: Ձեռագիրը արաբերենից կամ պարսկերենից հայերեն թարգմանելու գործընթացում կիրառվում է անընթեռնելի բառապաշարի կամ առանձին տերմինի վերականգնում, եթե առաջին հերթին ձեռագրում առկա է նույն տերմինը՝ այլ լեզվով (այս դեպքում՝ պարսկերեն), ծայրահեղ դեպքում կատարվում է տերմինի՝ բնագրին մոտ թարգմանություն:

Ուշադրության են արժանի նաև մուսուլման պատմաբանների կողմից վկայակոչված Մուհամմադ մարգարեի անունով պայմանագրերը⁵, որոնց բովանդակությունը ևս համընկնում է Մատենադարանի ձեռագրերի հետ, որը ցույց է տրվում պատմահամեմատական մեթոդի օգնությամբ, այդ ձեռագրերի համադրությամբ:

Վերոհիշյալ ձեռագրերը, կրկնօրինակվելով ուշ միջնադարում, ենթարկվել են որոշակի հավելումների, համապատասխանեցվել ժամանակի պահանջներին, ուստի լիակատար կերպով ճշգրիտ համարվել չեն կարող պատմական համապատասխան բնագրերի բացակայության պատճառով, չնայած այն հանգամանքին, որ դրանք ունեցել են իրենց բնագիրը, որը, սակայն, մեզ չի հասել: Սակայն այս հանգամանքը չի ստվերում այն մեծ դերը, որ խաղացել են մուհամմադյան դաշնագրերը քրիստոնյա և հայ համայնքների կյանքում: Դրանք իրենց ազդեցությունն են թողել միջնադարի մուսուլման բարձրաստիճան հոգևորականների՝ հայ համայնքի վերաբերող մի շարք խնդիրների վերաբերյալ դրական որոշումներում⁶:

Այսպիսով՝ կարծում ենք, որ մեր կողմից վերոհիշյալ թեման կարելի է ընդգրկել միջնադարյան պատմագրությանը առնչվող առարկաներում:

Gmkrtumyan@ysu.am

1 Ibn Manzur, Lisan al-arab, 1–9, Bairut, biduni Tarikh.

2 The Encyclopedia of Islam, Leiden, London, vol 1–5, 1960–1980.

3 Historie Nestorienne (Chonique de Seert) seconde partie puble et tradute par Addai Sher, Paris, 1918, p. 601–617.

4 Մինասյան Լ., Երկու հրովարտակ Մահամադ մարգարեից և Ալի ամիրապետից, Սպահան, 1985, էջ 3–5:

5 Կամբանեան Ք., Ալի ամիրապետին հայոց տուած հրովարտակը, «Բազմավեպ», հատոր 6–րդ, Վենետիկ, 1848, էջ 215:

6 Մկրտումյան Ք., Հրովարտակ պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր (VII–XII դդ.), Եր., 2017, էջ 118:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**Սկզբնաղբյուրներ**

1. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Եր., 1965:
2. Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Բ. Խալաթյանց, Վիեննա, 1919:
3. Գրիգոր Տաթևացի, Ընդդէմ տաճկաց, Եր., 2009:
4. Պատմութիւն Ղետնդեայ մեծի Վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:
5. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ՝ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979:
6. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ներկայս, Վաղարշապատ, 1983:
7. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, արաբական աղբյուրներ, Գ. Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005:
8. Коран. Переводи комментарии И. Ю. Крачковского, М., 1986.
9. Al-Balazuri, Futuh al-buldan, Bairut, 1983.
10. Al-Tabari, Tarikh al-rusulwa al-muluq III., Kahira, 1965.
11. Ibn al-Kufi Futuh al-buldan, 1968. Huderabad.
12. Ibn Manzur, Lisan al-arab, 1-9, Bairut, biduni Tarikh.
13. Historie Nestorienne (Chonique de Seert) seconde partie puble et tradute par Addai Sher, Paris, 1918.

Ուսումնասիրություններ

1. Կամբանեան Գ., Ալի ամիրապետին հայոց տուած հրովարտակը, «Բազմավեպ», հտ. 6, Վենետիկ, 1848:
2. Կոզմոյան Ա., Ղուրանը հայոց մեջ, Եր., 2003:
3. Մինասյան Լ., Երկու հրովարտակ Մահամմադ մարգարեից և Ալի ամիրապետից, Սպահան, 1985:
4. Մկրտումյան Գ., Հրովարտակ պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր (VII-XII դդ.), Եր., 2017:
5. Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հտ. 1, Երուսաղէմ, 1931:
6. Ислам. Энцикопедический словарь, М., 1991.
7. Тер-Гевондян А., Арменияи Арабский халифат, Ер., 1977.
8. Chazaryan M., Armenien unter der arabishen Herrschaft, Marburg, 1905.
9. Dadoyan S., The Armenians in the Medieval islamic world, vol 1, London, 2012.
10. The Enciclopedia of Islam, Leiden, London, vol 1-5, 1960-1980.

МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ТЕМЫ “УКАЗЫ–ДОГОВОРЫ КАК ИСТОЧНИК АРМЯНО–АРАБСКИХ ОТНОШЕНИЙ”

Г. МКРТУМЯН

В статье материалом исследования стали методы, связанные с обучением вышеуказанной темы, были установлены цель и проблемы темы. Было показано, что в основе преподавания тематики лежат историко–сравнительные и источниковеденческие методы, которые помогают формированию практических и теоретических навыков у студентов.

THE THEMES OF THE METHODS OF TRAINING “DECREES–CONTRACTS AS A SOURCE OF ARMENIAN–ARABIC RELATIONS”

G. MKRTUMYAN

In the article the research material became methods related to the training of the above theme, the goal and problems of the theme were established. It was shown that the teaching of the subject is based on the historical–comparative and source–study methods that help the formation of practical and theoretical skills among the students.

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

ԱԲԱԶՅԱՆ ՄԱՐԻՅԱ

Էդ. Բոյաջյանի անվան թիվ 121 հիմնական դպրոցի դասվար

ԱՐԳԱՐՅԱՆ ԱՇԽԵՆ

Նորավանի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, կենս. գիտ. թեկնածու

ԱՅՎԱԶՅԱՆ ԼԻԱՆԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կերպարվեստի ամբիոնի ասիստենտ

ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒՋԱՆՆԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի ասիստենտ, բան. գիտ. թեկնածու

ԱՎԱԳՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

Կոտայքի մարզի Կապուտանի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ

ԲԱԿՈՒՆՅ ԿԱՐԻՆԵ

Սյունիքի մարզի Վերիշենի միջնակարգ դպրոցի դասվար

ԲԱՂԴԱՍՏՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ

ԲԱՂԴԱՍՏՐՅԱՆ ՄԵՐԻ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ

ԲԱՐԱԿՅԱՆ ԳՈՂԱՐ

«Հայ կրթություն» կրթական հիմնադրամի երաժշտության ուսուցիչ

ԲԵԳԼԱՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

Կոտայքի մարզի Զրառապի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՕՅԵԼՅԱ

Երևանի թիվ 2 ավագ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ

ԳՈՒԼՔԱՆՅԱՆ ՏԱԹԵՎ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հապուկ մանկավարժության ամբիոնի հայցորդ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՆԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու

ԴԱՇՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հապուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկ. գիտ. թեկնածու

ԴԱՐԳԻՅԱՆ ՎԻՈՒԼԵՏԱ

Ս. Խանզադյանի անվան թիվ 184 դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ

ԵՐԻԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

ԵՐԻՑՅԱՆ ԱՍՅԱ

Կոտայքի մարզի ք. Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոցի դասվար

ԶԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԵՊՀ ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ

ԶԱՔԱՐՅԱՆ ՌՈՒՋԱՆՆԱ

Դիլիջանի թիվ 2 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՆԱԻՐԱ

Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոցի պատմության ուսուցիչ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՇԱՔԵ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ

ԹԱՆԳԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր

ԹՈՐԳՈՍՅԱՆ ՍՈՖԻ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու

ԻՍՊԻՐՅԱՆ ՆԱԻՐԱ

ՀՊՃՀ ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկնածու

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՔՍ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ամբիոնի դասախոս

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՎԱՐ

Երևանի թիվ 159 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ԿԱՆԴԱՆՅԱՆ ՍՅՈՒՋԻ

Երևանի «Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամի անգլերենի ուսուցիչ

ԿԻՐԱՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆՈՒՎԻ

Երևանի թիվ 64 դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

ՀԱԿՈՔՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, պրեհնիկական գիտ. թեկնածու

ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

Կրթության միջազգային ակադեմիայի մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոս

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՒԲԵՆԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոս

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԻԼՎԱ

Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ, ՄԿԱԳ տնօրենի տեղակալ

ՄԱՄՐԵՅԱՆ ԼԻԼԻԹ

Արտաշատի ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՆԱՎԻՏ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայրուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՇՈՏ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի հայցորդ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՐԳԵՅ

Մանկ. գիտ. դոկտոր

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Շիրակի պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկնածու

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒՋԱՆՆԱ

Արարատի մարզի Նշավանի միջնակարգ դպրոցի սոցիալական մանկավարժ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԻԿ

Արմավիրի մարզի «Մեծամորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՆԻ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկնածու

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

Արտաշատի ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԼՈՒԻՍԻՆԵ

ԵՊՀ անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոս

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԻՐԻՆԱ

Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ՀՐԱՋՈՒՎ

Երևանի «Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՆԻ

Երևանի թիվ 135 հիմնական դպրոցի անգլերենի ուսուցիչ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

Նորավանի միջնակարգ դպրոցի դասավար

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի ուսուցիչ

ՈՒՋՈՒՆՅԱՆ ՎԱՐԴՈՒՎ

Ք. Բյուրեղավանի թիվ 1 ավագ դպրոցի տեխնոլոգիայի և կերպարվեստի ուսուցիչ

ՊԱՊՈՅԱՆ ԱՐԳԱՄ

Ազրարային համալսարանի ֆիզիկայի և ջերմատեխնիկայի ամբիոնի վարիչ, ֆիզ. գիտ. թեկնածու

ծու, դոցենյար

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՈՎԱՐԻԿ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենյար, ֆիզմաթ գիտ. թեկնածու

ՍԱՀԱԿՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՊՀ անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոս

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՈՇ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի ամբիոնի դոցենյար, մանկ. գիտ. թեկնածու, Հայաստանի թատերական գործիչների միության անդամ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ

ՍԵՐՈԲՅԱՆ ԵՐՎԱՆԴ

Շիրակի պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենյար, ֆիզմաթ գիտ. թեկնածու

ՍԻՍՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության

ամբիոնի դոցենյար, մանկ. գիտ. թեկնածու

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ ԽԱԶԱՏՈՒԻ

Շիրակի պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենյար

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

Երևանի Արվեստ Միկոյանի անվան թիվ 166 հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՆԵ

ԵՊՀ տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի դոցենյար, բան. գիտ. թեկնածու

ՓԱԼԻԿՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ լոգոպեդիայի և վերականգնողական ամբիոնի պրոֆ. պաշտոնակատար, կենս. գիտ. թեկնածու, դոցենյար

ՖԻԴՈՅԱՆ ԱՆՈՒՇ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԻՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրաբարի թվականի ուսուցման մի քանի հարցեր 5

ՆԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԳՈՀԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՎԻՈԼԵՏԱ ԴԱՐԳԻՅԱՆ

Վիրտուալ իրականության մոդելավորման և իմպուացիոն խաղերի կիրառման դերը ուսուցման գործընթացում 9

ՏԻԳՐԱՆ ԹԱՆԳԱՄՅԱՆ

Մտորումներ արժեհամակարգի մասին 15

ՀՐԱԶՈՒՀԻ ՆԵՐՍԵՍՅԱՆ, ՍՅՈՒԶԻ ԿԱՆԴԱԼՅԱՆ

Աձանցման՝ որպես բառակազմության եղանակի համակցված ուսուցումը հայերենում և անգլերենում 22

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դաստիարակչական և ուսուցաբանական գաղափարների արտացոլումը ազգային էպոսում 30

ՍԵՎԱԿ ՈՍԿԱՆՅԱՆ

19–րդ դարի երկրորդ կեսի հայ մանկավարժական միտքը 35

ՍՈՖԻ ԹՈՐԳՈՄՅԱՆ, ՌՈՒԲԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի ուսուցման գործընթացում 39

RUZANNA ASATRYAN

Teaching Phraseological Units with Verbs of Movement in English (on the material of Dreiser’s “Sister Carrie” and its Armenian translation) 46

ՄԱՄԻԿՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ, ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

PDF ֆայլերի խմբագրման հնարավորությունները 53

ՌՈՒԶԱՆՆԱ ԶԱՔԱՐՅԱՆ

Ուղղակի մեջբերվող խոսքի ուսուցումը միջին դպրոցում 58

ԱՐԳԱՄ ՊԱՊՈՅԱՆ, ՆԱԻՐԱ ԻՍՊԻՐՅԱՆ

Մեխանիկայի դասընթացի կրկնության կազմակերպումը բալիստիկ ճոճանակով իրականացվող փորձերի համալիրով 62

ԱՆԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

«Իմ դպրոց» կայքի առաջադրանքների կիրառումն աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով (<< հիմնական դպրոցների յոթերորդ դասարաններում) 67

ԵՐՎԱՆԴ ՍԵՐՈԲՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԽԱԶԱՏՈՒՐ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ

Դինամիկայի խնդիրների լուծման ընդհանուր մոտեցումների մասին 72

ԳՈՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Թարեհական մանկավարժության ժամանակակից դրսևորումները ուսանողի անձի ձևավորման և զարգացման գործում 77

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայերենի լեզվական փոխներթափանցման հաղթահարման հնարքներն ու միջոցները գերմաներենի ուսուցման գործընթացում 80

ՎԱՐԴՈՒՇԻ ՈՒՋՈՒՆՅԱՆ

Խեցեգործության փեսական հիմքերը որպես ուսումնական առարկա 86

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՆԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տեսաձայնաշարային նյութին «ծանոթացնելու» մի քանի արդյունավետ մեթոդի մասին 90

ԼԻԱՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

«Պարզ կրթվածքներ» թեմայի դասավանդման մեթոդիկական դպրոցում 95

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

«Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր» թեմայի դասավանդման մեթոդները 99

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Համագործակցային ուսուցման մեթոդներն ու կիրառումը ֆիզիկայի դասավանդման ընթացքում 105

TATYANA SAHAKYAN, LUSINE MURADYAN, ANI NERSESYAN

Some aspects of teaching English as a Second Language 110

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ջրիմուռների քրոմատիկ հարմարվածություն» թեմայի դասավանդման առանձնահատկությունները դպրոցական կենսաբանության դասընթացում 115

ՍՊԱՐՏԱԿ ՓԱԼԻԿՅԱՆ

Ուսուցման ինտերակտիվ մեթոդները բուհում որպես կրթության գործընթացի բարելավման միջոց 119

ՇՏԿՈՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ԴԱՇՅԱՆ

Լսողության խանգարում ունեցող ավագ դպրոցականների փոքրների և թանգարանային նյութերի ընկալման մակարդակի հետազոտությունները 124

ՏԱԹԵՎ ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների դպրոցական կրթության նախապատրաստման բաղադրիչները 129

ՌՈՒՋԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՍՅԱՆ

Շեղվող վարքով դեռահասների հետ իրականացվող սոցիալ-մանկավարժական աշխատանքի արդյունավետ պայմանների մշակումը 133

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

МАРГАРИТА БАГДАСАРЯН

Поэзия А. Исаакяна в вокальном творчестве Г. Свиридова 137

ՇԱՔԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Լյուդվիգ վան Բեթհովենի դաշնամուրային սոնատների կապարողական որոշ խնդիրներ 141

ԱՐԱՔՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Էդուարդ Մեխակի Էլբակյան արվեստագետ-մանկավարժի դիմանկարը 145

ՄԵՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Երաժշտությունը որպես կրթութր դպրոցականների սպեղծագործական մտածողության զարգացման միջոց 149

ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Անգլերենի քերականության համառուսուման մոդելներն Իրանի ավագ դպրոցում..... 154

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Վ Ա Ն Փ Ո Ր Ձ Ի Փ Ո Խ Ա Ն Ա Վ Ո Ւ Մ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գրողի կենսագրության ուսուցման առանձնահատկությունները Հ. Թումանյանի օրինակով..... 159

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ

Միավորների միջազգային համակարգի ստեղծման նախապատմությունից 165

ՆԱԻՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ազգային և հոգևոր արժեհամակարգի ձևավորումը դպրոցում 169

ԱՆԺԵԼԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ակսել բակունցի «Լառ–Մարգար» պատմվածքի ուսուցումը ավագ դպրոցում 175

ԳՈՀԱՐ ԲԱՐԱԿՅԱՆ

Կոմիտասը որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր 179

ՍՈՒՍԱՆՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գնդուորդային (սֆերիկ) երկրաչափություն 185

ԱՆՈՒՇ ՖԻԴՈՅԱՆ

Ասկդիր–որոշի նպատակային կիրառությունը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ..... 192

ՍԻԼՎԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Օժանդակ խնդիրներ հարթաչափությունից..... 198

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Տոկոս» թեմայի ուսուցման իմ փորձից 202

ՄԱՐԻՅԱ ԱՐԱՋՅԱՆ

Հաղորդակցական կարողությունների ձևավորումը
և զարգացումը փարրական դասարաններում..... 208

ԱՇԽԵՆ ԱՐԳԱՐՅԱՆ

Ուսուցման ժամանակակից մեթոդներով դասավանդման իմ փորձից..... 212

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԿԻՐԱՎՈՍՅԱՆ

«Վիճակագրություն, վիճակագրական տվյալների թվային բնութագրիչները»
թեմայի ուսուցման իմ փորձից..... 217

ԱՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հեքիաթի ուսումնասիրման առանձնահատկությունները փարրական դպրոցում 21

ՇՈՒՇԱՆԻԿ ՇԻՐՎԱՆՅԱՆ

Ուշադրության տեսակների զարգացումը կրթսեր դպրոցական փարրիքում:
Կրթսեր դպրոցականի ընդհանուր բնութագիրը..... 226

ԱՅՅԱ ԵՐԻՑՅԱՆ

Կրթսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումը
մայրենիի ուսումնասիրման գործընթացում 234

ՆԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ինտերնետային կայքի (Web page) պատրաստում: HTML փաստաթղթի կառուցվածքը..... 239

ԻՐԻՆԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Փոխաբերությունը Մ. Մեծարենցի բանարվեստում..... 243

ԿԱՐԻՆԵ ԲԱԿՈՒՆՑ

Հեքիաթի ուսուցման իմ փորձից 248

ԳՈՒՐԳԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆ

*Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական գործունեության
ժամանակակից մոտեցումները..... 253*

ԼԻԼԻԹ ՄԱՄՐԵՅԱՆ

Գոյականի ուսուցումը ավագ դպրոցում..... 259

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դաստիարակագիտության կառուցման անհրաժեշտության մասին..... 264

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՄԻՏՔ



ПЕДАГОГИЧЕСКАЯ МЫСЛЬ



PEDAGOGICAL THOUGHT

2018

1-2

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Ժագ Թոփալազյանի
Համակարգող՝ Նարինե Ղուկասյան

Ճապիկին՝ Ներսիսյան դպրոցի համայնապատկերը

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16:

Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 17.5 տպ. մամուլ:



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak